<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա

Արդի խնդիրները և մոտեցումները զինղեկների կարգավիճակի վերաբերյալ

Առարկա – ՆԶՊ և ԱԿ

Մասնակից – մայոր Մովսես Շահվերդյան

Ղեկավար – փ /գ-տ Արտակ Իսահակյան

Երևան 2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……. - 3
2. Հիմնական մաս…….. - 6
3. Եզրակացություն…….. - 12
4. Օգտագործված գրականության ցանկ…….. - 13

Ներածություն

Ռազմական գործը և զինվորական պատրաստությունը մարդկության պատմության ձևավորման հետ միասին սկսել է գոյություն ունենալ,իսկ նախնական զինվորական պատրաստությունը,որպես առարկա մեր իրականության մեջ կյանքի է կոչվել 20 –րդ դարի սկզբներին: Նախնական զինվորական պատրաստություն առարկան հնարավորություն է տալիս ձևավորելու մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:

ՆԶՊ առարկայական ծրագրի նպատակն է՝ զինվորական պատրաստորթյան հիմունքներից նվազագույն գիտելիքներ տիրապետող, արդիական գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների միջոցով՝ արտակարգ իրավիճակներում կենսապահովում իրականացնող, հասարակական բարձր գիտակցություն, բարոյահոգեբանական որակներ և վարքային դրսևորումներ ունեցող անձի ձևավորումը:

Սույն ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել <<Հանրակրթության մասին>>, <<Պաշտպանության մասին>> <<Զինապարտության մասին>> <<Քաղաքացիական պաշպանության մասին>> ՀՀ օրենքները, ինչպես նաև՝ <<Հանրակրթական պետական կրթակարգը>>, <<Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը>>:

ՆԶՊ առարկայի նոր ուսումնական ծրագրում կատարված որակական փոփոխությունները պայմանավորված են ինչպես ռազմագիտության ոլորտում վերջին տասնամյակում տեղի ունեցած փոփոխություններով և իրավիճակային զարգացումներով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ձևով՝ օգտագործելով ուսուցման սպիրալաձև և վեկտորային մոտեցումները,շարժելով անհատական պատրաստվածությունից խմբային պատրաստվածության: Այստեղ առաջնային է ուսուցումը գործնական հիմքերի վրա դնելը, մարտական իրադրությունում և արտակարգ այլ իրավիճակներում

անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, աստիճանաբար հիմնային որակների ձևավորումից գործնական վարժանքներում դրանց կիրառումը: Կարևորվում է նաև միջառարկայական կապերի զարգացումը և ուսուցողական նյութերի պարզեցումը,ոչ պռոֆիլային թեմաներից ազատումը և արդիական ու կարևոր թեմաների ներմուծումը,ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Առաջադրվող ուսումնական ծրագիրը երկու հիմնական ուղղվածություն ունի՝ մասնագիտական հիմունքների ուսուցում և դաստիարակություն: Այն մեծապես համապատասխանում է մանկավարժական գիտության հիմնարար սկզբունքներին՝ օբյեկտիվություն, ուսուցման համակարգվածություն և հաջորդականություն, դիտողականություն և մատչելիություն, գործնական ուղղվածություն, գիտելիքների յուրացում՝ հմտությունների և կարողությունների ձևավորման ձևով, հասարակական գիտակցության աճ, ուսուցանվողների ակտիվություն, առարկայի և ոլորտի նկատմամբ դրական վերաբերմնունքի ձևավորում և մասնագիտական կողմնորոշում:

Սույն ծրագիրն ապահովում է հանրակրթության պետական կրթակարգով հաստատված տասներկուամյա միջնկարգ կրթության սահմաններում և այլընտրանքային հայեցակարգով աշխատող դպրոցներում իրականացվող ՆԶՊ առարկայական ծրագրի բովանդակային պարտադիր միջուկը, ուսումնական գործունեության տեսակները, հայեցակարգը,նպատակն ու խնդիրները:

Բացի դպրոցական ծրագրով առանձնացված ժամաքանակով դասերից՝ ենթադրվում է արտադասարանական խմբակների ստեղծում,իրականին մոտ պայմաններում անհատական և խմբային գործնական կարողությունների զարգացման համար՝ լրացուցիչ ճամբարային պատրաստություն, տեղական,մարզային, համապետական մրցույթների և ռազմամարզական խազերի անցկացում:

ՆԶՊ ուսումնական առարկայի ծրագրի գործնական թեմաներով նախատեսված վարժանքները, առանձին թեմաները և դրանց մոտեցման ձևերը ենթակա են շարունակական կատարելագործման:

Այս փաստաթուղթը կարող է հիմք հանդիսանալ ՆԶՊ ուսումնական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական, օժանդակ ուսումնական ձեռնարկների, տեսադասերի ստեղծման համար:

Արդի խնդիրները և մոտեցումները զինղեկների կարգավիճակի վերաբերյալ

Զինղեկը դպրոցում սովորաբար հանդես է գալիս երկու անվանումով՝ դպրոցի զինղեկ (զինվորական ղեկավար), և' ռազմագիտության, և' անվտանգ կենսագործական կամ նախնական զինվորական պատրաստության ուսուցիչ:

Անգամ զինղեկի ունեցած պաշտոնի այս ակնհայտ տարընթերցումները և տարբեր անվանումները ցույց են տալիս, որ զինղեկի կարգավիճակի, անելիքների, պարտականությունների և իրավունքների հարցում կա նկատելի անորոշություն, բացակայում է զինղեկի կարգավիճակի հստակ սահմանումը:

Հենց սա էլ ցույց է տալիս մեր հետազոտության կարևորությունը և անհրաժեշտությունը: Ուստի կփորձենք այս հետազոտության սահմաններում շարադրել մեր պատկերացումները խնդրի վերաբերյալ:

Նախ անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ բուն առարկային, որի դասավանդումը իրականացնում է զինղեկը: Ապա կփորձեմ պարզաբանել, թե իմ պատկերացմամբ բացի կոնկրետ առարկայի դասավանդումից ուրիշ ի՞նչ անելիքներ ունի զինղեկը դպրոցում, որն էլ պետք է պայմանավորի նրա կոնկրետ կարգավիճակը:

ՆԶՊ առարկայի դասավանդումը մեզ փոխանցվել է խորհրդային տարիներին գոյություն ունեցող դրվածքից:

Առարկայի անհրաժեշտությունը և կարևորութունը հիմնավորվում է, նաև այն իրավիճակով, որում հայտնվեց մեր հանրապետությունը անկախության հռչակման հենց առաջին օրերից, այն է՝ չդադարող պատերազմը Ադրբեջանի հետ:

Զինղեկի աշխատանքի բնույթը ենթադրում է, որ նա պետք է ոչ միայն համապատասխան գիտելիքներ և ունակություններ հաղորդի աշակերտներին, այլև անմիջական հետևի նրանց ընդհանուր պահվածքին, կարգապահությանը, բարոյա – հոգեբանական վիճակին, ապահովի աշակերտների ռազմա – հայրենասիրական դաստիարակության անհրաժեշտ մակարդակը:

Ինչպես տեսնում ենք զինղեկը դպրոցում և այլ հաստատություններում կատարում է բավականին կարևոր և պատասխանատու աշխատանք: Բնական հարց է առաջանում ի՞նչ պայմաններում է զինղեկը կատարում այդ աշխատանքը, ի՞նչ հնարավորություններ են նրա համար ստեղծված, ինչպե՞ս է իրականացվում նրա վարձատրությունը, խրախուսումը, ի՞նչ ծրագրով, դասագրքերով, օժանդակ նյութերո՞վ է անցկացվում առարկայի պարապմունքները, ինչպիսի՞ նյութատեխնիկական բազա է առկա ուսումնական հաստատությունում և նմանատիպ այլ հարցեր:

Կարծում եմ պետք է արձանագրել այն փաստը (իրողությունը), որ միանգամայն արդարացիորեն ընդգրկելով ՆԶՊ առարկան դպրոցական ծրագրերի մեջ, միաժամանակ մեր հանրապետությունում սկզբնական շրջանում հնարավորություն և ժամանակ չի եղել հիմնավորելու և մանրակրկիտ խորանալու ուսուցանվող ծրագրերի և դասագրքերի բովանդակության և որակի հարցերում:

Միաժամանակ առարկայի դասավանդման գործում ընդգրկեցին, ինչպես ասում են, ձեռքի տակ եղած բոլոր կադրերը՝ անկախ իրենց մասնագիտական որակներից և ցուցաբերած արդյունավետությունից:

Սակայն այժմ առաջացել է անհրաժեշտություն՝ ունենալ ավելի որակյալ և ժամանակակից պահանջներին համապատասխան ծրագրեր, դասագրքեր, նյութա – տեխնկիական բազա, նաև առարկայի դասավանդման գործում ընդգրկել ավելի պատրաստված մասնագետներ՝ կիրառելով ուսուցման նոր մեթոդներ և եղանակներ:

Կարծում եմ այդ հարցի ճիշտ լուծումը կօգնի, նաև զինղեկների տեղի և դերի հստակեցմանը ուսումնական հաստատությունում, որով էլ կորոշվի զինղեկի կարգավիճակը:

Իմ կարծիքով նախնական զինվորական պատրաստություն առարկայի ծրագիրը կազմելիս պետք է հաշվի առնել Հայաստանի հանրապետությունում և նրա շուրջ ստեղծված առկա ռազմա – քաղաքական իրավիճակ, այդ բնագավառում հանրապետության և մեր ողջ հասարակության առջև ծառացած մարտահրավերները

և խնդիրները, նաև այն հայեցակարգերը, որոնք մենք կիրառում ենք կամ պարտավոր ենք կիրառել՝ այդ թվում, նաև ազգ – բանակ հասկացությունը:

Ծրագրերի հստակեցումից հետո համապարփակ լուծում կստանան, նաև դասագրքերի հետ կապված խնդիրները:

Այս կոնտեքստում կհստակեցվի, նաև թե ինչպիսի՞ նյութատեխնիկական բազա և ի՞նչ կահավորանք է պետք ունենալ առարկայի ուսուցումը առավել արդյունավետ դարձնելու համար:

Ապա կհստակեցվի այն հարցը, թե ի՞նչ չափանիշներով պետք է ընտրել այն կադրերին, ովքեր պետք է աշխատեն որպես զինղեկներ, ի՞նչ պահանջներ պետք է դրվեն նրանց առջև և ի՞նչ պայմաններ պետք է ստեղծել, որպեսզի նրանք կարողանան լիարժեքորեն կատարել իրենց պարտականությունները:

Բնական է, որ յուրաքանչյուր աշխատողի համար, այդ թվում, նաև զինղեկների, կարևոր նշանակություն ունի, թե ինչպե՞ս է գնահատվում և վարձատրվում իր աշխատանքը:

Կարծում եմ, զինղեկները պետք է ստանան հաստատագրված, կայուն աշխատավարձ՝ անկախ ուսումնական հաստատությունում ունեցած ժամանակից, այն պարզ պատճառով, որովհետև նրանց իրական գործառույթները շատ լայն են, բազմաբնույթ և չեն սահմանափակվում միայն դասաժամերով և որպեսզի այդ ամենը կատարվի որակով և արդյունավետ, զինղեկները պետք է շահագրգռված լինեն, նաև համապատասխան աշխատավարձով: Այս առումով կարծում եմ զինղեկների աշխատավարձը որոշելիս պետք է առաջնորդվել ոչ թե կրթական հաստատության աշխատողների նկատմամբ դրսևորվող տրամաբանությամբ, այլ բանակում ծառայող սպաների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքով: Եվ ընդհանրապես կարծում եմ, որ թե' զինղեկները, և թե' սովորողները պետք է ՆԶՊ ուսուցման ժամին իրենց առավելագույն չափով զգան զինվորական ծառայության մեջ, իրենց վարքեր և պահվածքը ՆԶՊ դասին պետք է առավելագույն նմանեցվի զինվորական ծառայության մեջ գտնվողի վարքին և պահանջներին:

Զինղեկի աշխատանքները առավել ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար կարծում եմ շատ կարևոր է, նաև թե զինղեկը ինչպիսի՞ փոխհարաբերություններ է ստեղծում իր աշխատանքային միջավայրում:

Ուսումնական հաստատություններում դասավանդվում են առարկաներ ինչ – որ ձևով առնչվում են ՆԶՊ առարկային և այն գործառույթներին, որոնք իրականացնում է զինղեկը:

Հստակ է, որ ուսումնական հաստատություններում առանձնահատուկ նշանակություն ունեն նախնական զինվորական պատրաստության և ֆիզկուլտուրայի առարկաների սերտ կապվածությունը, այն շատ պարզ պատճառով, որ զինվորականի համար ամենակարևոր հատկանիշներից մեկը նրա ֆիզիկական տվյալներն են, նրա առողջությունը, նրա դիմացկունությունը:

Ուսումնական հաստատություններում, հենց դա նկատի ունենալով, նախատեսվում և անցկացվում են բազմապիսի և բազմաթիվ համատեղ միջոցառումներ, որոնք կազմակերպում են զինղեկները և ֆիզկուլտուրայի ուսուցիչները:

Դա միանգամայն ճիշտ և հիմնավոր մոտեցում է, որը նախատեսվում է, նաև պետական ծրագրերով:

Շատ կարևոր է համագործակցությունը զինղեկների և ֆիզիկա դասավանդող մասնագետների հետ ավտոմատ հրացանի ինքնաձիգի մեխանիզմների աշխատանքը պարզաբանելու և հասկանալու համար:

Ֆիզիկայի ուսուցչի հետ համագործակցությունը կարևոր է, նաև տարբեր ականների կառուցվածքը և գործունեությունը հասկանալու համար:

Փամփուշտի, ձեռքի նռնակի կառուցվածքը և աշխատանքի մեխանիզմը հասկանալու համար, օգտակար է քիմիայի մասնագետի հետ համագործակցությունը:

Տեղանքում կողմնորոշվելու թեմաները ավելի լավ յուրացնելու համար կարիք կա աշխարհագրության մասնագետի հետ համատեղ աշխատանքը:

Առաջին բուժօգնության թեմաները ուսումնասիրելիս շատ օգտակար է ներգրավել կենսաբանության մասնագետին և դպրոցի բուժաշխատողին:

Իսկ ռազմա – հայրենասիրական բնույթի աշխատանքները և միջոցառումները լավագույնս կազմակերպելու համար անհրաժեշտ է ողջ կոլեկտիվի՝ առանձնապես երգ – երաժշտության, պարարվեստի, գրականության, պատմության մասնգետների սերտ համագործակցությունը:

Սա ցույց է տալիս, թե՞ որքան մեծ է զինղեկների գործառույթների սպեկտորը ուսումնական հաստատություններում:

Բավականին լուրջ են զինղեկների անելիքները, նաև ուսումնական հաստատությունից դուրս կապեր և հարաբերություններ հաստատելու գործում:

Նախ շատ կարևոր է տարբեր ուսումնական հաստատություններում աշխատող զինղեկների համագործակցությունը փորձի փոխանակման, համատեղ միջոցառումներ անցկացնելու, առաջնահերթ կարևոր հարցեր քննարկելու և բազմաթիվ այլ նպատակներով: Հենց այդ խնդիրները կոորդինացնելու և կազմակերպելու համար շրջաններում կա ավագ զինղեկ հասկացությունը:

Զինղեկը մշտական կապի մեջ է տվյալ տարածքի զինկոմիսարիատի և ոստիկանության հետ՝ շատ կոնկրետ խնդիրներ լուծելու համար:

Իր առջև դրված խնդիրները արդյունավետ լուծելու համար զինղեկը պետք է, նաև (որը և արվում է իրականում), իր ուսումնական հաստատության և մոտակայքում գտնվող որևէ զորամասի միջև հաստատի սերտ կապեր, այդ զորամասի հրամանատարության հետ կազմի համատեղ աշխատանքների կոնկրետ ծրագիր:

Այդ ծրագրով պետք է նախատեսվի սովորողների պարբերական այցելություններ զորամաս՝ տեղում ծանոթանալու զինվորական ծառայության առանձնահատկություններին: Շատ ճիշտ կլինի ուսումնական հաստատություններում կազմակերպվող ռազմա – հայրենասիրական բնույթի միջոցառումներին հրավիրել համագործակցող զորամասի ներկայացուցիչներին, հնարավորություն տալ նրանց անմիջականորեն շփվել աշակերտների հետ:

Չմոռանանք, նաև որ իրենց աշխատանքի բնույթով զինղեկները անմիջական հարաբերությունների մեջ են, նաև արտակարգ իրավիճակների համապատասխան ծառայությունների հետ, որոնց հետ նույնպես անց են կացնում տարբեր բնույթի համատեղ միջոցառումներ:

Զինղեկը օգնում է, նաև սովորողներին նախապատրաստվել և մասնակցել ՆԶՊ առարկային առնչվող տարբեր օլիմպիադաններին, վիկտորինաներին և այլ միջոցառումների:

Զինղեկների կարգավիճակի հարցը քննարկելու և հստակեցնելու գործում կարծում եմ պետք է անպայմանորեն հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, թե իրենց գործառույթները իրականացնելիս, ո՞ր նախարարությունների և գերատեսչությունների հետ են նրանք առնչվում:

Իր աշխատանքի բնույթով զինղեկը ուղղակիորեն առնչվում է երեք նախարարությունների հետ՝ կրթության, պաշտպանության, ներքին գործերի, որի կազմում այսօր գործում է արտակարգ իրավիճակների կառույցը:

Առաջին բուժօգնության թեմաների հետ կապված զինղեկը կարող է առնչություններ ունենալ Կարմիր Խաչ կազմակերպության և առողջապահության նախարարության հետ:

Եթե լինենք անկեղծ և օբյեկտիվ, պետք է արձանագրենք, որ առայժմ այդ հարաբերությունների ճիշտ և արդյունավետ կառուցելու հարցերում բավականին անելիքներ կան: Հստակություն չկա նախարարությունների կոնկրետ պարտավորությունների և անելիքների հարցերում:

Ե Զ Ր Ա Հ Ա Ն Գ ՈՒ Մ.

Որպես վերը շարադրվածի ամփոփում և եզրահանգում.

Զինղեկի գործառույթները լավագույնս կատարելու համար, անհրաժեշտ է ստեղծել որոշակի պայմաններ:

Զինղեկի վարձատրությունը պետք է որոշվի ելնելով նրա անելիքների կարևորությունից, և ոչ թե դասերի ժամաքանակից:

Զինղեկը իր աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու համար, պետք է ունենա որոշակի ինքնուրույնություն և նախաձեռնողականության հնարավորություն: Նա պետք է օգտվի որոշակի հնարավորություններից, ըստ անհրաժեշտության և նպատակահարմարության կազմակերպելու և անցկացնելու իր դասուսուցումը:

Վերջին տասնամյակներում մեր երկրում կրթությունն իրականացվում է տարերայնորեն, փորձ է արվում, առանց հաշվի առնելու ազգային մենթալիտետը, առանձնահատկությունները, արհեստականորեն մեր կրթական համակարգ ներմուծել տարրեր, որոնք չեն համապատասխանում մեր ազգային առանձնահատկություններին, ուսումնասիրություններ չեն իրականացվում, որի արդյունքում էլ չենք ունենում այն, ինչ ակնկալում ենք: Կրթական համակարգն այն առանձնահատուկ համակարգն է, որի առջև պետությունը պիտի դնի կոնկրետ խնդիր, որ շարունակական, երկարաժամկետ հեռանկարում ունենա այն հասարակաությունը, որը հարիր է մեր արժեհամակարգին, մեր ազգային մտածելակերպին: Ցավոք այսօր բացակայում է նման պետական մոտեցումը մեր կրթական համակարգին, մեր ուսուցիչներն այսօր ամենաանտեսված կատեգորիան են, որի արդյունքում էլ մեր երկրում կրթական համակարգը չի կարողանում կատարել իր առջև դրված խնդիրները:

Օգտագործված գրականություն

1. Կրթական պետական չափորոշիչներ
2. ՆԶՊ 7-11 դասագրքեր